№ 124 Յուլիսի 13 Երեքշաբթի

1882

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Յուլիսի 13 Երեքշաբթի № 124

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ալէքսանդրիայի ռմբակոծութիւն։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մելիքութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 5-ին

Հիմա մեր լրագրութիւնը իր ղէսաւոր հարց է չունել անտեսութիւնը և պարապած է այդ հարցով, այս պատճառով ամեն մի թղթակից պէտք է գրի իրեն չընջապատող ժողովրդի տնտեսական դրութեան վրա, որպէս զի լրագրութիւնը կարողանայ իր բռնած գործը առաջ տանել։

Այս անգամ ուզում եմ մի փոքր խօսել տեղիս գլխաւոր պարապմունքի՝ գինեգործութեան վերաբերմամբ։ Երևանին մօտեցող ճանապարհորդին աչքի է ընկնում ոչ այնքան քաղաքը, ինչքան խաղողի այգիները։ Նոքա Երևանին շրջապատում են՝ արևելեան և հիւսիս-արևելեան կողմից 3 մղոնաչափ, արևմտեան կողմից 5 մղոնաչափ, հիւսիս-արևմտեան և հարաւային կողմերից 2 մղոնաչափ։ Այսքան այգիներից ստացվում է տարեկան մօտ 15,000 կարաս (կարասը 20 լիտր է, իսկ լիտրը 24 ֆունտ) գինի։ Պէտք է իմացած, որ այս հայերինն է, եթէ այսքան էլ հաշուենք թուրքերինը, որոնք գինի չեն պատրաստում, երևանը տարեկան կը տար մօտ 30,000 կարաս (մօտ. 6—8 միլիոն շիշ)։ Այսքան գինի պատրաստվում է հին նահապետական սիստեմայով, որի կարասը արժէ 20—30 ռուբ., շիշը 10—12 կոպէկ., այն ինչ մեզ մօտ բերած արտասահմանի գինին, որի խաղողը շատ ցածր է մերից, արժէ շիշը 40—60 կոպէկ և աւել։ Հիմա տեսէք, եթէ այսքան (6 միլ. շիշ) գինին պատրաստվի եւրոպական նոր ճաշակով, մեր խաղողը կը տար ոչ թէ 30,000 կարաս, 25 ռ., միջին թւով, որ կանէ 750,000 ռուբ., այլ 6 միլ. շիշ, 50 կոպէկով միջին թւով, ուրեմն 3 միլիոն ռուբլ, համարեա 4 անգամ աւել։ Եւ բացի սորանից այդ պատրաստած գինին ոչ թէ Երևան և մասամբ Թիֆլիս կը գնար, այլ ամբողջ Կովկասը, Ռուսաստանը և ամբողջ Եւրոպան։ Շամպանիայի և Բորդոյի գինիները, հազարաւոր մղոններ ճանապարհորդելով, գալիս հասնում են մեզ, գնում են շատ հեռու տեղեր. այդ ինչից է, եթէ ոչ լաւ պատրաստելուց։ Եթէ այստեղ ևս լինէին նոյն մեքենաները և նոյն պատրաստողները, միթէ մեր գինին ևս չէր մրցի եւրոպական գինիների հետ։

Ահա մի քանի տարուց յետոյ Ջուլֆ-Թիֆլիսեան երկաթուղու հետ կը մտնեն Երևան և եւրոպացիներ։ Մենք յանկարծ կը տեսնենք, որ այդ անկոչ հիւրերը սկսում են ծծել բնութեան մեզ պարգևած բարիքները, և մենք վիզներս կոռ, պէտք է գնանք խնդրելու նրանցից որ մեր գինին մեզ վաճառեն, այն էլ թանգ գնով։ Արդեօք լաւ չէր լինի, քանի որ եւրոպացին դեռ չէ մտել Երևան, իրենք երևանցիք աշխատէին բերելու մասնագէտներ և գինեգործութիւնը կատարելագործելով, չը թողնէին եւրոպացուն մրցելու իրենց հետ։ Այս տարի երևանցի պ. Կարապետ Ափրիկեանը աւարտելով գինեգործութիւնը Վիէննայում, եկած է այստեղ. ինչպէս լսում ենք, ուզում է գինեգործութեան գործարան բանալ։ Յոյս ունենք որ պարոնը այդ կանի, որովհետև ունի բաւական մեծ կարողութիւն, և բարի օրինակ կը դառնայ երևանցիներին, որոնք ով գիտէ մինչև երբ դեռ պէտք է սպասեն այդպիսի մի երիտասարդի իրենց գլխաւոր գործը կատարելագործելու և արդիւնաւորելու։ Յոյս ունենք նաև, որ պարոնը իր իմացածը չի աշխատի պահելու ուրիշներից, այլ իր երիտասարդական աշխոյժով, կը տարածի իր սովորածը ժողովրդի մէջ, նաև չի ղանայ անձամբ ցոյց տալու և հասկացնելու գինեգործներին նրանց բռնած եղանակի վնասակարութիւնը, և նորի օգտաւէտութիւնը։ Թող պարոնը կամ ինքը գրի լրագրութեան մէջ կամ իր համոզումները այստեղի գինեգործութեան վերաբերմամբ պատմի մի ուրիշի, որը իր կողմից կաշխատի լրագրութեան մէջ յայտնելու։ Իմ կողմից այսքան գրելուց յետոյ, թողնում եմ գրածիս պակասները լրացնելու գործին աւելի մօտ ծանօթ երիտասարդ մասնագէտներին։

Այս քանի օրերս ինչպէս յայտնի է, մօտ 160 տիրացուների ձեռնադրութիւն եղաւ։

Ինձ պատահեց խօսել այդ տիրացուներից մի քանիների հետ։ Արդեօք ինչպէս պէտք է հասկացնէք ժողովրդին Սուրբ Գրքի խօսքը, հարցնում ես. տիրացուն սկսում է մէջ բերել իր սովորած մի քանի կտորներ Աստուածաշնչից։ Ես առաջարկում եմ նրան բացատրել. տիրացուն կամ չէ պատասխանում, կամ կատարելապէս չը հասկացած, ով գիտէ թէ ինչ է բացատրում։ Այս հանգամանքում ահա ինչ կը նշանակէր կենդանի լեզուով Աստուածաշնչի թարգմանութիւնը, անհրաժեշտութիւնը։ Գալով նախապաշարումներին, տիրացուները այնքան նախապաշարված էին, որ սարսափով էին պատմում սատանաների մարդուս հոգին գողանալը, Գաբրիէլ հրեշտակի արիւնաթաթախ հոգի դուրս քաշելը և այլն։ Այսպիսիներին ինչպէս է ընտրել Էջմիածինը քահանայ,—մենք զարմանում ենք։ Ինչ պէտք է սպասել այսպիսի տգէտ, բարոյապէս փչացած, Սուրբ Գրքի խօսքը չը հասկացող, կրօնամոլ չարչիներից։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաբաթ, յուլիսի 10-ին, Թիֆլիսի ժողովարանում ստարչինները նշանակել էին անդամների և նրանց ընտանիքների համար ձրի ներկայացումն պ. Ներսիսեանի։ Ժողովուրդ շատ կար և պ. Ներսիսեան իր ներկայացումն յաջող կերպով կատարեց։ Հասարակութիւնը շատ գոհ մնաց այդ ներկայացումից։ Պ. Ներսիսեան ստացաւ մի չափաւոր վարձատրութիւն ժողովարանից։

—

Թիֆլիսի ժողովարանի ստարչինները անդամների ընդհանուր ժողով էին նշանակել ուրբաթ օր, յուլիսի 9-ին։ Այդ ժողովի մէջ կարդացվեցան պ. պ. Խսարօևի, Ղորդանօվի, Գուրգէնբէկովի, Բաշէտի և Սէնկերիմ Արծրունու յայտարարութիւնները, որտեղ այդ պարոնները յայտնում են թէ ժամանակի պակասութեան պատճառով հրաժարվում են կլուբի ստարչինների պաշտօնից։ Ընդհանուր ժողովը ընդունեց պարոնների հրաժարականը։ Ասում են թէ պարոնների հրաժարականի գլխաւոր պատճառն այն էր, որ մի քանի ժամանակ առաջ կլուբի ընդհանուր ժողովը չընդունեց նրանց գանգատը պ. Պոպովի դէմ։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են։ Իզդիրից երկու վերստաչափ հեռու գտնվող Բահարլու հայաբնակ գիւղից 14 տուն պատրաստվում են գաղթելու դէպի Ղարսի նահանգը։ Ասում են որ իբր թէ այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

XLI.

1808 թուին վախճանվեցաւ Ղարաբաղի Իսրայէլ կաթողիկոսը։ Դա այն չարագործն էր, որ մատնեց հայոց մելիքներին, որ Յովհաննէս կաթողիկոսին սպանել տուեց և իր դաւաճանութեամբ Իբրահիմ-խանի սիրելի դարձաւ (տես գլ. XX և XXI)։

Մեզ յայտնի է, որ նոյն չարագործից հալածվելով, սպանված Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը, Ղարաբաղի դաղթականների հետ ապրում էր Վրաստանի, Հաղբատայ վանքում։ Այնտեղ մնաց նա ամբողջ 14 տարի (տես գլ. XXXVII)։

Երբ Սարգիս կաթողիկոսը լսեց իր օխերիմ հակառակորդի՝ Իսրայէլ կաթողիկոսի մահը, երբ իմացաւ, որ Իբրահիմ-խանը, հայերի անհաշտ թշնամին, սպանված է, և երբ տեսաւ, որ հայոց մելիքները իրանց հպատակների հետ Վրաստանից կրկին տեղափոխվեցան Ղարաբաղ, ինքն ևս մտածեց վերադառնալ Գանձասարի վանքը, և կրկին տիրանալ Աղուանից կաթողիկոսութեան աթոռին, որից բաւական ժամանակ անջատված էր։

Նախ ուղարկեց նա իր եղբօր որդի Բաղդասար վարդապետին, որ Գանձասարի վանքը կարդի դընէ, որ յետոյ ինքը գնայ։

1808 թուին, այսինքն հէնց նոյն տարվայ մէջ, երբ Իսրայէլ կաթողիկոսը վախճանվեցաւ, Բաղդասար վարդապետը Թիֆլիսից ճանապարհ ընկաւ դէպի Ղարաբաղ *)։ Նա գտաւ Գանձասարի վանքը բոլորովին ամայի դրութեան մէջ։ Եռանդոտ, գործունեայ և ժրաջան վարդապետը կարողացաւ փոքր ժամանակում ոչ միայն կարգի դնել վանքը, այլ նրան յաջողվեցաւ մասամբ յետ խլել վանքի ընդարձակ կալուածները, որ զանազան թուրք բէկեր, կամ հայ ազնուականներ տիրացել էին։

Երբ Գանձասարի վանքում ամեն ինչ կարգի էր դրված, Սարգիս կաթողիկոսը թողեց Վրաստանը և Հաղբատայ վանքից տեղափոխվեցաւ Ղարաբաղ (1812)։ Նրա հետ գնացին Ղարաբաղի դաղթականներից նրանք, որ դեռ ևս մնացել էին Վրաստանում։

Սարգիս կաթողիկոսը Գանձասար տեղափոխվելով, շուտով նրա և Էջմիածնի մէջ նոր վիճաբանութիւններ ծագեցան։ Այդ վիճաբանութիւններին առիթ տուեց կաթողիկոսի փառասիրական վարմունքը։

Մեր պատմութեան XXXVII գլխում տեսանք, որ Սարգիս կաթողիկոսը Վրաստանում գտնված ժամանակ, այնտեղից Էջմիածին գնալով, խոստումն տուեց, որ այլ ևս չի պիտի գործ ածէ կաթողիկոսական տիտղոս և կնիք, այլ պիտի բաւականանայ միայն արք-եպիսկոպոսական տիտղոսով ու կնիքով, և դրա համար նրան յանձնեցին Հաղբատայ վանքի վանահայրութիւնը և Վրաստանում գտնված ղարաբաղցի դաղթականների առաջնորդութիւնը։ Եւ ամբողջ 14 տարի Վրաստանում կառավարում էր իր հօրը որպէս արք-եպիսկոպոս։ Բայց հէնց որ վերադարձաւ Ղարաբաղ, կրկին սկսեց իրան Աղուանից կաթողիկոս կոչել և կաթողիկոսական իրաւունքներ ի գործ դնել։ Սարգսի այդ վարմունքը, ի հարկէ, պէտք է յուզէր մի նոր կռիւ նրա և Էջմիածնի մէջ։

Էջմիածնից նրան ազդարեցին, որ պահպանէ իր խոստմունքը, բայց նա ոչ միայն ուշադրութիւն չը դարձրեց, այլ դիմելով Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի պաշտպանութեանը, իրան բոլորովին Էջմիածնից անկախ յայտնեց։ Այդ երկպառակութիւնները տևեցին երեք տարի, մինչև 1815 թուին Էջմիածնի բարձր հոգևոր կառավարութիւնը, ռուսաց իշխանութեան ուժով, հարկադրեց Սարգսին հրաժարվել կաթողիկոսական տիտղոսից և տուեց նրան միտրապօլիտութեան տիտղոս արք-եպիսկոպոսի աստիճանով։ Այնուհետև վերջացաւ Աղուանից կաթողիկոսութիւնը, որ սկսված էր Լուսաւորչի թոռ Գրիգորիսի ժամանակից։

Դեռ իր կենդանութեան ժամանակ Սարգիս միտրապօլիտը իր եղբօր որդի Բաղդասար վարդապետին ուղարկեց Էջմիածին, որ եպիսկոպոս ձեռնադրվի, որպէս զի իր յաջորդը նա լինի։ Որպէս Աղուանից կաթողիկոսութիւնը դարերով շարունակվում էր Հասան-Ջալալեանների տոհմի մէջ, Սարգիսը ցանկանում էր, որ Աղուանից միտրապօլիտութիւնը ևս, որը իրանից սկսվեցաւ, նոյնպէս շարունակվէր նոյն տոհմի մէջ։

Բաղդասարը Էջմիածին գնալով, 1820 թուին Եփրեմ կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրվեցաւ, և վերադառնալով Գանձասարի վանքը, Սարգսի ծերութեան պատճառով, համարեա ինքն էր կառավարում վիճակի հոգևոր իշխանութիւնը։

1826 թուին Ղարաբաղը ենթարկվեցաւ մի նոր դժբախտութեան. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան 80,000 հոգով անցաւ Երասխը, տիրեց Ղարաբաղին. տեղային մահմեդականները միացան պարսիկների հետ. Շուշի բերդապահ պօլկովնիկ Ռէուտը, ռուսաց փոքրաթիւ զօրքերով մնաց փակված բերդի մէջ. Աբաս-Միրզան 48 օր պաշարված դրութեան մէջ պահեց բերդը։ Մի և նոյն ժամանակ Ֆաթալի-շահի փեսայ Ամիր-խան սարդարը և Աբաս-Միրզայի երէց որդի Մահմադ-Միրզան, զօրքերի անագին բազմութեամբ, անցան Գանձակի դաւառը, տիրեցին Գանձակի բերդին, և այնտեղից առաջացան մինչև Շամքոր, պատրաստվում էին գնալու, որ Թիֆլիսը տիրեն։ Երկրի քրիստոնեայ ազգաբնակութիւնը գտնվում էր սարսափի և մահուան տագնապի մէջ։

Մեր պատմութեան յետագայ գլուխներում ցոյց կը տանք, թէ որպէս հայազգի իշխան զինվորական Մադաթովի փառաւոր յաղթութիւններով պարսիկները ջարդվեցան, և կրկին փախան դէպի Պարսկաստան,—իսկ այժմ կասենք այնքանը միայն, որ վերաբերում է Սարգիս միտրապօլիտին։

Հայերին սպասում էր ընդհանուր կոտորած։ Սարսափած ժողովուրդը, ամեն ինչ թողած, ցրիւ էր եկել, թաքնվել էր լեռների և անտառների մէջ։ Աբաս-Միրզան, Պարսկաստանի այդ հայրենասէր թագաժառանգը, Ղարաբաղի ռուսաց զօրքերով գրաւվելը վերաբերում էր ոչ այնքան ռուս զինուորների յաղթական սուիններին, որքան հայերի գործակցութեանը յօգուտ ռուսների (և իրաւ ռուսները Ղարաբաղը տիրելու համար ամենևին արիւն չէին թափել։) Այդ էր պատճառը, որ նա կամենում էր պատժել հայերին, որոնք, նրա կարծիքով, դաւաճանել էին Պարսկաստանի դարևոր հպատակութեան դէմ։

Աբաս-Միրզայի բարկութիւնը ամաքելու համար և հայ ժողովրդին նրա վրէժխնդրութիւնից ազատելու համար ծերունի Սարգիս միտրապօլիտը վեր առեց իր հետ Ջրաբերդի իշխող Մէլիք-Վանի Աթաբէկեանին և Գիւլիստանի իշխող Մէլիք-Յովսէփ II *) Մէլիք-Բէգլարեանին, և երկքը միասին գնացին Աբաս-Միրզայի մօտ։ Պարսից թագաժառանգը ընդունեց նրանց Խան-քէնդի գիւղում, որը գտնվում է Շուշի-բերդից մի քանի վերստ հեռաւորութեան վրա։

---

*) Բաղդասար վարդապետի հետ Ղարաբաղ գնաց Սարգիս կաթողիկոսի միւս եղբօր (Գաբրիէլ-բէկի) որդի Մէլիք-Գրիգորը։ Այդ ծանօթութեան մէջ հարկաւոր ենք համարում նկատել և այն, որ Սարգիս կաթողիկոսի ազգականների թըւում վրաստանում գտնվում էր և նրա եղբայր Ալլահ-Ղուլի-բէկը։ Այդ դաւաճանը նոյն անձնաւորութիւնն է, որ Իբրահիմ-խանի մօտ մատնեց Ղարաբաղի մելիքներին, նրանց ռուսաց կառավարութեան հետ ունեցած գաղտնի յարաբերութիւնների համար (տես գլ. XX)։ Վրաստանում նա մի ժամանակ անպատիւ կերպով թափառում էր, մինչև Ղարաբաղի մելիքները վրէժխնդիր եղան նրանից, և գլուխը կտրելով մարմինը անհետացրին...

*) Մէլիք-Յովսէփ II-ը հանգուցեալ Մէլիք Ֆրէյդունի երէց որդին էր։

գաղթողները արդէն թոյլատրութիւն ստացել են գաղթելու Ղարսի նահանգը: Դա չատ ուրախալի բան է: Եթէ այդպէս է, միւս գիւղացիներն էլ, որոնք հողի պակասութիւն ունեն, կը հետեւեն անչուշտ նրանց օրինակին:»

—

Ռուսաց «Гусли» ծաղրական շաբաթաթերթի խմբագրութիւնը յայտնել է առանձին յայտարարութեամբ, որ առժամանակ դադարեցնում է իր հրատարակութիւնը:

—

Լրագիրները լսել են որ երեւելի ամերիկացի գիտնական Էդիսոն եկող ձմեռը գիտաւորութիւն ունի ճանապարհորդել Ռուսաստանում:

—

«Արձագանք» շաբաթաթերթի մէջ կարդում ենք որ Թիֆլիսի նոր թիւրքաց հիւպատոս Էդուարդ բէյ Դիւզեան արդէն հասել է Թիֆլիս և ստանձնել է իր հիւպատոսական պաշտօնը:

—

Շնորհակալութեամբ ստացանք Բերլինից, պրոֆէսոր Վիրխովից, առանձին բրոշիւրով տպագրված նրա այն դասախօսութիւնը, որ աշխարհահռչակ գիտնականը կարդացել է Կովկասի մասին Բերլինի Աշխարհագրական ընկերութեան մէջ, և որի մասին «Մշակի» անցեալ համարում տպված էր դոկտոր Անդրէաս Արծրունու թղթակցութիւնը: Պ. Վիրխովի դասախօսութիւնը կրում է «Reise im Kaukasus» վերնագիրը:

—

Ահա մօտ մի ամիս է արդէն որ Թիֆլիսում անտանելի շոգեր է անում և այդ բոլոր ժամանակ մենք անձրեւի մի կաթիլ անգամ տեսած չենք:

—

Շնորհակալութեամբ ստացանք «Հոգեփոխութիւն կամ կախարդված գրինց» կատակերգութիւնը, թարգմանութիւն Կամսար Տէր-Դաւթեանցի: Գիրքը տպված է Թիֆլիսում, Յովհ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1882 թվին և արժէ 20 կոպէկ: Վաճառվում է բացառապէս «Կենտրոնական դրավաճառանոցում:»

—

Ընթերցողին յայտնի է արդէն մեր լրագրում տպված հեռագրից այն սարսափելի անցքը, որ պատահել է Կուրսկ-Մոսկվայի երկաթուղու գծի Զէրն կայարանի մօտ: Այդ անցքի մասին մանրամասները, որ կարդում ենք ռուսաց լրագիրներում, սարսուռ են դցում մարդու վրա: Ութ վագոններ, մօտաւորապէս 200 ճանապարհորդներով, գլորվեցան ուղիից, նրանց վրա ընկաւ չոգեկառքը և բոլորն էլ, իրանց ծանրութեամբ խորասուզվեցան փխրուն հողի մէջ, որ անմիջապէս ծածկեց ութ վագոններն էլ: Այդտեղ երկաթուղին անցնում էր 18 սաժէն բարձրութիւն ունեցող ածուի հողի վրա, որ աւելի էլ փխրուն դարձաւ անընդհատ եկած անձրեւներից: Ածուի հողի տակ անցկացրած ջրի թուջեայ խողովակը փչացած էր և բացի սրանից անչափ նեղ էր և չէր կարող ամբողջ ջուրը իր մէջ պարունակելու: Այդպիսով երկաթուղու վարչութեան անհոգութեամբ 200 զոհեր կենդանի թաղվեցան փխրուն հողի և տիղմի մէջ, նրանց վրա դարձեալ փուլ եկաւ ածուի հողի անապին քանակութիւնը, քարերով, վագոնների մնացորդներով, ռելսներով: Եւ այդ երկու հարիւր կենդանի թաղված մարդկանց գերեզմանի վրա անմիջապէս սկսեց վազել կամուրջի տակով անցնող գետակը: Մինչև հիմա մեռածների անապին թւից միայն 8 դիակներ գտանվեցան: Բացի այդ թաղվածներից գնացքի սարսափելի փուլ գալու ժամանակ ճանապարհորդներից չատերը վերաւորվեցան: Նրանց տարան մօտակայ քաղաքի, Օրիոլի հիւանդանոցը, որտեղ վիրաւորվածներից չատերը արդէն մեռան: Մայրաքաղաքների ռուս մամուլը, իրաւամբ, վրդովված է երկաթուղու վարչութեան յանցաւոր շահասիրութեան և անհոգութեան դէմ: Ասում են որ Զէրն կայարանի գլխաւորը վաղուց է արդէն անդադար դեկուցում էր տալիս երկաթուղու կենտրոնական վարչութեանը, թէ հարկաւոր է նորոգել ուղիի խարխուլ տեղը, պնդացնել հողը, հարկաւոր է փոխել ջրի խողովակները, բայց վարչութիւնը աւելորդ ծախս համարելով այդ նորոգութիւնները, յետ էր գցում նրանց կատարումն: Մամուլը միաձայն պահանջում է խիստ դատաստանական քննութիւն և յանցաւորների պատժելը:

—

Բոլոր ռուսաց լրագիրները լի են հանգուցեալ գեներալ Սկոբելեվի փառաւոր թաղման հանդիսի նկարագրութիւններով: Դրեթէ ամբողջ Ռուսաստանում հոգեհանդիսաներ են կատարվում հանգուցեալի յիշատակին:

—

Մեզ հաղորդում են որ կիրակի օր, սմսիս 11-ին, առաւօտեան 10 ժամին Թիֆլիսի Մողնու Ս. Գէորգ եկեղեցում, սովորական պատարագից յետոյ, չքեղ հանդիսով կատարվեցաւ Մուշ նահանգի 22 տարեկան մահմեդական մի երիտասարդի մկրտումը, թոյլատրութեամբ գլխաւոր կառավարութեան Կովկասի և հայոց վիճակային կօնսիստորիայի: Ցիշեալ մկրտվողը, Մահմուտ Օսօ-Օղլին, հայոց սերունդից է, ինչպէս ինքն է պատմում: Նա մահմեդական եղած ժամանակ պահել է բոլոր հայոց ծօները, յաճախել է եկեղեցին և բացի հայերէն լեզուից ուրիշ լեզու չը գիտէ: Նրա նախնիքները թիւրքաց բռնութիւնից ստիպված, ընդունել են մահմեդականութիւնը: Ինչպէս երեւում է այժմ հայոց եկեղեցին էլ ըսկսում է վերջապէս համոզվել որ կան աշխարհիս երեսին հայ-մահմեդականները, մի իրողութիւն որ մեր կղերական կուսակցութիւնը մի երկու տարի սրանից առաջ հերքում էր և այն աստիճան ոգէտ էր որ ծաղրում էր «Մշակի» գիւտը հայ-մահմեդականների:

—

«Մշակի» ընթերցողին արդէն յայտնի է մեր լրագրում տպված «Միջադգային հեռագրական ընկերութեան» հեռագրից որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի վերցնել առևտրական գիլդիաները: Այս կառավարական կարգադրութեան առիթով գտնում ենք «Արձագանքի» մէջ հետեւեալ նկատողութիւնը: «Առաջին անգամ գիլդիան մտաւ Ռուսաստանում 1721 թվին: Բազմատեսակ փոփոխութիւնների ենթարկվելով, գիլդիան 1825—1827 թ. վերջնական կազմակերպութիւն ստացաւ, որ չնչին փոփոխութիւններով պահպանվեցաւ մինչև 1863 թվի վերջին կերպարանափոխութիւնը, երբ աւելի օրինաւոր դասվեցաւ սահմանել միմիայն երկու վաճառականական կարգ կամ գիլդիա, որ գլխաւորապէս մեծ քանակութեամբ առևտրի նախապատուութիւնը առաջինին տրվեր, իսկ երկրորդին մանր առևտրի իրաւունքը: Այժմ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ արդէն գիլդիան ճանաչված է, որպէս իր նշանակութիւնը կորցրած, որովհետև ընդհանուր գնուորապրութեան մտցնելու և հարկաւորութեան առաջիկայ ընդհանուր յեղափոխութեան հետ վաճառականութիւնը, որպէս մի հարկատու դասակարգ կարելի է ասել թէ գոյութիւն չունի, այն ինչ գիլդիայի մինչև այժմ գործադրվող օրէնքը նկատում է առևտրը որպէս մի առանձին վաճառականական դասակարգի սեփականութիւն, ֆինանսների մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում է «Моск. Вѣд.» լրագիրը, հարց է դրել տեցրած միացնել մի անուան տակ վաճառականական դաս անունով բոլոր մինչև այժմ գոյութիւն ունեցող առևտրական բաժանմունքները, թէ առաջին, թէ երկրորդ գիլդիայի վաճառականներին և թէ մեշչաններին: Գիլդիական արհեստաւորների վկայականները և հարկերը վերցնելով, ֆինանսների մինիստրութիւնը մտադիր է դասակարգերի բաժանել առևտրական ձեռնարկութիւնները նրանց շրջաղարձութեան համեմատ, աստիճանաբար աւելացնելով հարկը, նայելով առևտրի շրջաղարձութեան մեծանալուն: Սրա հետ միասին քաղաքները և գիւղաքաղաքները կը բաժանվեն զանազան կարգերի, կը կազմվեն նաև ցուցակներ ապրանքների այլ և այլ տեսակների համար:»

—

Ստացանք բժշկապետ Շահպարոնեանցից 8 ռուբլի բաժանորդագին «Ժարնալ դ'Օրիան» լրագրի համար: Նոյն լրագրի բաժանորդագին 4 ռուբլի ստացանք Միքայէլեան Ծովածոցից, պ. Սերգէյ Մարտիրոսեան Հախումեանցից: Ընդամենը 12 ռուբլի:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Տեղիս փօստատանը կրկին սկսվել են առաջվայ սարսափելի անկարգութիւնները: Լրագիրների համարները ճշգրտութեամբ չենք ստանում: Ծառայողները երբէք չեն բաւականացնում գանգատվողներին և միշտ պատճառ են բերում թէ բիլէտ չունեն, կամ այս ինչ լրագրի համարը չէ ստացվել: Դա, ի հարկէ, անկարելի բան է, որ ստացված չը լինեը և ոմն գիտէ թէ բաժանորդների համարները ում ձեռքումն են պատվում: Ես, օրինակ, այս տարի «Մշակի» մօտ 20 համար չեմ ստացել, նոյն իսկ վերջին չորս թերթերում ձեր լրագրի 6 համար չեմ ստացել: Սորա վրա դարձնում եմ փօստային վարչութեան ուշադրութիւնը:» Հաւատացած ենք, որ «Մշակը» չատ աւելի կը տարածվեր գաւառներում, եթէ փօստերը բարեխղճարար կատարէին իրանց պաշտօնը:

—

Մեզ գրում են Երեւանից որ յուլիսի 1-ին սաստիկ անձրեւ դալուց, հեղեղ գոյացաւ Երեւանի արեւելեան կողմից: Երեք հողի թուրքերից խեղդվեցան ջրերի մէջ: Նոյն օրը մի 8 տարեկան թուրք երեխայ կուռելով նոյն հասակի երկու հայ երեխաների հետ, դանակով սպանեց մանուկներից մէկին, իսկ միւսի ձեռքը վիրաւորեց:

—

Ծերունի միտրապօլիտը իր արտասուքով և Աթաբէկեան Մելիք-Վանին իր պերճախօսութեամբ կարողացան ոչ միայն ամոքել թագաժառանգի բարկութիւնը, այլ արժանացան նրա առանձին յարգանքին: Աբաս-Միրզան չնորհեց նրանց փառաւոր «խալաթներ», և հանդատացնելով ճանապարհ դրեց, խոստանալով, թէ հայոց ժողովրդին ոչինչ վնաս չի հասցնի, եթէ հայերը հաւատարիմ կը մնան Պարսկաստանին և կը դադարեն ռուսներին օգնելուց:

Ի հարկէ, հայերը չէին կարող չը համակրել ռուսներին, և որպէս յետոյ կը տեսնենք, նրանք եղան, որ ամեն հնարներով նպաստեցին իշխան Մաղաթովի յաղթութիւններին Աբաս-Միրզայի դէմ և Ղարաբաղը բոլորովին մաքրեցին պարսից զօրքերից: Այս ամենայնիւ, Սարգիս միտրապօլիտի և նրա ընկեր երկու մելիքների տեսութիւնը Աբաս-Միրզայի հետ բաւական թանգ նստեց նրանց համար:

Երբ պարսից զօրքերը հեռացան Ղարաբաղից, իշխան Մաղաթովը նրանց երեքին էլ կալանաւորել տուեց: Ռուսաց անհաչտ թշնամու հետ տեսութիւն անելը համարվեցաւ նրանց համար մի տեսակ դաւաճանութիւն: Սարգիս միտրապօլիտին ուղարկեցին Թիֆլիս, այնտեղ բանտարկվեցաւ: Իսկ Աթաբէգեան Մելիք-Վանին և Մելիք-Բէգլարեան Մելիք-Յովսէփին աքսորեցին Բաղու, որ այնտեղից տանեն Սիբիր:

Ութն ամիս թէ մելիքները և թէ Սարգիս միտրապօլիտը բանտարկված մնացին: Վերջը նրանց անմեղութիւնը յայտնվելով ազատվեցան:

Սարգիս միտրապօլիտը ազատվեցաւ Ներսէսի (վերջը կաթողիկոս) աշխատութեամբ: Բայց այն տանջանքները, որ նա կրեց իր բանտարկութեան ժամանակ, սաստիկ մաշեցին նրա ծերացած կազմուածքը: Նա բոլորովին հիւանդ վերադարձաւ Թիֆլիսից և նոյն հիւանդութիւնով 1828 թվին վախճանվեցաւ:

Սարգսի մահից երկու տարի յետոյ (1830) Ղարաբաղի մելիքները խնդիրքով դիմեցին Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսին, որ հանգուցեալի եղբօր որդի Բաղդասար եպիսկոպոսը նրա փոխարէն միտրապօլիտ նշանակվի: Բաղդասարը կանչվեցաւ Էջմիածին և նոյն տարվայ մէջ ստացաւ միտրապօլիտութեան աստիճան:

Պէտք է մի առանձին բախտ համարել, որ այն ժամանակներում, երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին և Երեւանեան նահանգին, Էջմիածնում գտնվում էր Ներսէսի նման մի եկեղեցական, իսկ Գանձասարի վանքում Բաղդասար միտրապօլիտը: Այդ երկուսը իրանց գործունէութեամբ բաւական նման էին միմեանց, այն զանազանութեամբ միայն, որ Ներսէսը ունէր քաղաքական իդէալներ, իսկ Բաղդասարը եկեղեցական և վանքային բարեկարգութեան հեռանդ:

Եթէ չը լինեը Բաղդասար միտրապօլիտը, այսօր Գանձասարի վանքը և Ղարաբաղի միւս վանքերը չէին ունենայ մի քանի հարիւր հազար դեսեատին տարածութեամբ վանքային կալուածներ:

Ղարաբաղի մելիքների և Սարգիս միտրապօլիտի Վրաստանում գաղթած ժամանակ, Ղարաբաղի վանքապատկան կալուածները անտէր մնալով, ընկել էին զանազան թուրք բէկերի ձեռքը: Բաղդասար միտրապօլիտի մեծ ջանքերին ենք պարտական, որ կարողացաւ ազատել և կրկին վանքերի անունով հաստատել, եթէ ոչ կորուսած կալուածների ամբողջը, այլ գոնէ նրանց մեծ մասը:

Պատմութեան դէմ չը մեղանչելու համար, պէտք է խոստովանել և այն, որ Բաղդասար միտրապօլիտը, որպէս առ հասարակ մեր բոլոր բարձրաստիճան եկեղեցականները, ունէր և իր թոյլ կողմերը: Այն է, որ իր ազգատ ազգականների—Հասան-Ջալալեանների վիճակը ապահովելու համար, նրանց օգտին վանքային կալուածներից փոքրիկ բաժիններ հանեց... Այդ բաժիններից իր մասը ստացաւ և միտրապօլիտի վէզիրը:

Բայց այդ բոլոր թուլութիւնները, համեմատելով այն մեծ ծառայութիւնների հետ, որ նա կատարեց, վանքապատկան կալուածքները կորդեւոով զանազան յափշտակիչների ձեռքից,—այդ թուլութիւնները, կրկնում ենք, պէտք է ներելի համարել...

Ղարաբաղի վանքապատկան կալուածքների վերաբերութեամբ աւելի անաղնիւ կերպով վարվեցաւ Իսրայէլ կաթողիկոսը, Սարգիս կաթողիկոսի (յետոյ միտրապօլիտի) ժամանակակիցը: Զը մոռանանք, որ այդ Իսրայէլ կաթողիկոսը, Իբրահիմ-խանի սիրելին, հայոց մելիքների մատնիչը, Գանձասարի վանքի Հասան-Ջալալեան կաթողիկոսների առնմից չէր, այլ Երիցմանկանց վանքի ինքնիշխան և հակաթոռ կաթողիկոսներից մէկն էր: Գուցէ ընթերցողը յիշում է, որ Ղարաբաղի մելիքների և Սարգիս կաթողիկոսի Վրաստան գաղթած ժամանակ, Իբրահիմ-խանի պաշտպանութեամբ, այդ Իսրայէլն էր վարում Աղուանից կաթողիկոսութեան իշխանութիւնը: Այդ դաւաճանը վախճանվեցաւ իր ազգականներից մէկի տանը, որի մականունը յիշելու ցանկութիւն չունենք: Նոյն տան մէջ կաթողիկոսը հաւաքած ունէր Ղարաբաղի մի քանի հարուստ վանքերի արծաթեղէն անօթները, սրբութիւնները և թանգագին զգեստները: Կաթողիկոսի վախճանվելուց յետոյ այդ բոլորը մնացին որպէս սեպհականութիւն նրա ազգականի: Դա մի մեծ կորուստ չէր լինի, եթէ նոյն տան մէջ չը մնային և զանազան վանքերի կալուածագրերը:

Եթէ Բաղդասար միտրապօլիտին չը յաջողվեցաւ ձեռք բերել Ղարաբաղի վանքապատկան բոլոր կալուածքները, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ կալուածագրերը մնացել էին նոյն մարդի մօտ, որի տանը վախճանվեցաւ Իսրայէլ կաթողիկոսը: Այդ պարոնը զանազան զարտուղի և մթին ճանապարհներով կամ ինքը տէր եղաւ նոյն կալուածքներին և կամ թոյլ տուեց որ թուրքերը տիրեն, ծածուկ նրանցից փողեր ստանալով և վանքային կալուածագրերը ոչնչացնելով, որ իր գողութիւնը չը յայտնվի:

Բաղդասար միտրապօլիտը սկզբում ուշադրութիւն դարձրեց Խաչէնի գաւառում գտնվող և Գանձասարի վանքին պատկանող կալուածները թափել յափշտակողների ձեռքից: Այդ կալուածները այնքան լայնատարած էին, որ նրանց վրա զետեղված էին 60-ի չափ վանքապատկան գիւղեր, իրանց հարուստ անտառներով, արգաւանդ վարելահողերով և արօտատեղիներով: Բայց նա կարողացաւ միայն 30,000 դեսեատինի չափ կըրկին սեպհականացնել վանքին, իսկ մնացեալ մեծ մասը մնաց վիճելի:

Բաղդասար միտրապօլիտի աշխատութիւնների նպատակը վանքապատկան կալուածների վերաբերութեամբ այն չէր, որ նա դրանցով ապահովացնէր վանականների և վանքերի գոյութիւնը, այլ գլխաւորապէս այն էր, որ նրանք վնէին եկամուտների մշտական և հաստատուն աղբիւր Ղարաբաղի զանազան տեղերում դպրոցներ հիմնելու համար:

Ինքը, Բաղդասար միտրապօլիտը, թէև անուս, և որպէս ղարաբաղցի, կոշտ-կոպիտ մարդ էր, բայց որպէս ղարաբաղցի, ունէր և բնական խելք, տոկունութիւն և հեռատեսութիւն *): Նա ուսում չունէր, բայց սաստիկ ուսումնասէր էր: Սկզբում հիմնեց նա Գանձասարի վանքում մի դպրոց և Նախիջեւանի կողմերից հրաւիրեց ճարտասան և լաւ հայկական Յովսէփ վարդապետին *) որպէս վարժապետ և նոյն դպրոցի կառավարիչ:

(Կը շարունակվի)

---

*) Բաղդասար միտրապօլիտի զուարճախօսութիւնները, նրա կեանքից ստեղծված անեկդոտները, Ղարաբաղի հայ հասարակութեան մէջ նոյն ժողովրդականութիւնն են ստացել, որպէս Մոլլա-Նասրատինի առակները:

*) Այդ Յովսէփ վարդապետը, որը բազմաթիւ հաստրած աշակերտներ և մինչև այսօր լաւ անուն է թողել Ղարաբաղում, որպէս յետոյ իմացվեցաւ, նա իսկապէս եպիսկոպոս է եղել, բայց իր բարձր աստիճանը թաքցնելով, պարապվում էր մանկավարժութեամբ իբրև մի հասարակ վարդապետ:

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային խորհրդի անցեալ նիստերից մեկում, երբ քննվում էր քաղաքիս քաղաքների մաքրության և վերանորոգության (բեմոնտի) հարցը, քաղաքագլուխը յայտնեց, որ փողոցների մաքրության և վերանորոգության համար անցեալ տարվայ որոշած 75 հազար բուբլի գումարի վրա այժմ աւելացաւ դարձեալ 11 հազար բուբլի: Զայնաւոր պ. Ալազաթով առաջարկեց որ այդ գումարը ամբողջապէս գործադրվի Հալաբարի քուչաների վրա, որոնք, ինչպէս «Մշակում» շատ անգամ յայտնված է եղել, ողորմելի դրության մէջ են գտնվում: Թէպէտ այդ առաջարկության դէմ խօսողներն էլ եղան, սակայն Գուման այնու ամենայնիւ ընդունեց այդ առաջարկությունը: Բայց Հալաբարից մեզ հաղորդում են, որ այն օրից մինչև այսօր Հալաբարում չէ երևում թէ ինչ բանի վրա է գործ դրվում այդ գումարը: Թղթակիցն ասում է թէ առհասարակ քաղաքային ինժենէր պ. Աղունակով շատ անհոգ է իր պաշտօնականության մէջ:

—

ԹԻՖԼԻՍԻ մէջ ամեն բան մի կողմից անհոգության է, միւս կողմից խնամություն: Երբ Դվորցովի փողոցի վրա այրվեցան Սարաջևի և Զուբալովի տները, և նրանց քանդեցին որ նորից չմնան, այն ժամանակ մեր քաղաքային վարչությունը հոգ չը տարաւ որ այդ տները փոքր ինչ յետ քաշվին փողոցի գծից, գոնէ մի երկու, երեք արշինով, որպէս զի գլխաւոր փողոցը որ այդքան նեղ է, փոքր ինչ լայնանայ: Քաղաքը կարող էր պ. պ. Զուբալովին և Սարաջևին վարձատրել այդ մի քանի արշին գետնի համար: Բայց այդ բաւական չէ. այժմ երբ տները չմնվեցան պ. պ. Սարաջև և Զուբալով, ի հարկէ, մեծ կապեր ունենով քաղաքի գործիչների հետ, կարողացան իրաւունք ստանալ աւելի էլ նեղ դարձնել փողոցը, երեք թէ չորս վերշոկով լայնացնելով իրանց տների առջև եղած տրոտուարը: Այնուն բան խնամություն է մեզանում: Իսկ Դվորցովի փողոցը, որ Թիֆլիսի ամենագլխաւոր փողոցն է, այն աստիճան նեղ է, որ միայն երեք ֆայտոն շարքով կարող են անցնել: Ի՞նչ կը լինի մի քանի տարուց յետոյ, երբ երթևեկությունը կը չատանայ քաղաքում:

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են: «Սեպտեմբերի 15 հազի քահանայացուների ձեռնադրությունը որ պէտք է կատարվեր ամսոյս 4-ին, Վարդավառի կիրակի օրը, եպիսկոպոսի Սեան չը գալու պատճառով, յետաձգվեցաւ:

—

Լսում ենք, որ հասարակության մէջ բարձր դիրք ունեցող և իր բարի ձգտումներով յայտնի անձնաւորություն ցանկություն է յայտնած իր մօտ ընդհ. Ուս. ժողովի տեղության ընթացքում տան և հնդ ուսուցիչ հիւրասիրել, եթէ այն ժամանակ, իրանից անկախ պատճառով, պաշտօնապէս քաղաքից հեռացած չի լինի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

—

Անգլիական լրագիրները հեռաւոր կերպով նկարագրում են այն պատճառները, որոնք ստիպեցին անգլիական նաւատորմին ռմբակոծել Ալէքսանդրիա: Որովհետև Ալէքսանդրիայի զօրքերի հրամանատարը յայտնեց, որ ծովեզրեայ ամրոցների վրա ոչինչ աշխատանքներ չեն կատարվում, ծովապետ Սէյմուր որոշեց մերկացնել եգիպտացիների ատութիւնը: Յուլիսի 3-ին դիշերը նա հրամայեց իր նաւերի վրա եղած էլեկտրական լապտերները ուղղել դէպի ափը և լուսաւորել ամրոցները: Այդ լուսաւորության շնորհիւ դիտակով հեշտությամբ կարելի էր տեսնել ամեն բան, ինչ որ կատարվում էր ափի վրա: Եգիպտացիներ թնդանոթներ էին դնում զանազան ամրոցների վրա: Իւրաքանչիւր թնդանոթի մօտ պահական զինուոր էր կանգնած և մօտ քսան զինուորներ էին աշխատում: Էլեկտրական լուսաւորությունը սաստիկ վախեցրեց բանուորներին, որոնք այդ բանը ռմբակոծության նշան համարեցին և անկարգությամբ փախան դէպի քաղաքը: Լուսադէմին այդ երկիւղը անցաւ: Բանուորները վերադարձան և սկսեցին շարունակել իրանց աշխատանքները: Դրանից յետոյ ծովապետ Սէյմուր վճռեց ռմբակոծել քաղաքը և առաջարկեց եւրոպացիներին անյապաղ պատսպարվել նաւերի վրա: Բոլոր հիւպատոսները նաւերը անցան: Անգլիական գլխաւոր հիւպատոսը յայտնեց եգիպտական մինիստրությունն նախագահ Բահիր-փաշային, որ Անգլիան Եգիպտոսի մէջ այլ ևս ներկայացուցիչ չունի և որ մինիստրությունը պատասխանատու կը լինի խեդիվի անձնական ապահովության համար: Անգլիայի ներկայացուցիչները դրանից առաջ այցելեցին խեդիվին և առաջարկեցին նրան նաւերի վրա պատսպարվել, բայց նա հրաժարվեցաւ: Տեֆիկ-փաշա ասեց, որ նա անկարելի է համարում վտանգի ժամանակ թողնել այն երկիրը, որ յանձնված է նրա հոգատարությանը և որտեղ նա շատ հաւատարիմ բարեկամներ ունի: Ռմբակոծության լուրը սարսափեցրեց քաղաքի բնակիչներին, որոնք անիծում էին Արաբի-փաշային:

ԹԻՒՐՔԻԱ

—

„Голосъ“ լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է յուլիսի 5-ից հետևեալը: Այսօր դեսպանները և պետությունների միւս ներկայացուցիչները կոնֆերենցիայի վերջերորդ նիստը եգիպտական հարցը լուծելու համար: Թէպէտ „Հավասի“ ընկերության հեռագիրները հաղորդեցին իբր թէ Բ. Դուռը համաձայնել է մասնակցել կոնֆերենցիային և զօրքեր ուղարկել Եգիպտոսի մէջ կարգապահությունը վերականգնելու համար, բայց այդ լուրերին դժուար է հաւատալ. Բ. Դուռը մինչև այժմ հեռու է մնում կոնֆերենցիայից, որի դոյությունը Սայիդ-փաշա իր բազմաթիւ շրջաբերականներով յայտնում է ապարդիւն և անչարմար այն նպատակին, որի համար պետությունները հիմնեցին միջազգային այդ դատարանը:

Եթէ հանգամանքները չեն ստիպի թիւրքերին, նրանք իրանց կամքով երբէք չեն համաձայնի պատերազմ յայտնել արաբներին, որոնք բացարձակ յայտնում են իրանց հաւատարմությունը և համակրությունը թիւրքերին և սուլթանին: Եւ ի՞նչի համար Բ. Դուռը պէտք է ձեռնարկէ այդ գործին: Նրա համար միայն որ պահպանի արևմտեան պետությունների ազդեցությունը, որոնք ձգտում են թիւրքիայից անջատել Եգիպտոսը և Տունիսի նման Ֆրանսիայի և Անգլիայի նպատակներին յարմար դարձնել: Իսկ Տունիսի վիճակը տեղական ազգաբնակության տեսակէտից այնքան ծանր է, որ եգիպտացիները ամեն բան կանեն, որպէս զի Տունիսի ազգաբնակության վիճակին չենթարկվին: Արաբական „Տարաբլիս“ լրագիրը հաղորդում է, որ Տունիսից Տրիպոլիս անցած արաբների թիւը հասնում է 250,000: Նրանք ամենքն էլ ստիպված էին գաղթել, որովհետև նրանց հետ չափազանց խիստ էին վարվում Ֆրանսիական զօրապետները, որոնք ցանկանում էին երկիրը մաքրել օտարի լուծին դժուարությամբ ենթարկվող արաբներից:

Եթէ սուլթանը ընդունի եւրոպացիների պաշտպանի դերը նեղոս գետի ափերի մօտ, այն ժամանակ Սերիայի, Արաբիայի, Բաղդադի և Եգիպտոսի մէջ բնակվող և, սուլթանի կարծիքով, քաղաքական կեանքի համար նոր հասունացած արաբները նրա պետության համար աւելի վտանգաւոր թշնամիներ կը լինեն, քան թէ եւրոպացիները, որոնք, ճշմարիտ է, աւելի ուժեղ են, բայց նրանք փոխադարձ ատելությամբ և շահերի զանազանությամբ միմեանց թուլացնում են: Այս դէպքում սուլթանը կը կորցնէր լայնատարած Ասիայի մահմեդականների համակրությունը, որոնք նայում են նրա վրա իբրև իսլամի պաշտպանի վրա: Նա կը վերաւորէր նոյն իսկ թիւրքերի ազգային զգացմունքները, որոնք բացարձակ համակրություն են յայտնում Արաբի-փաշայի ազգասիրական ձգտումներին, որի նպատակն է ապատել երկիրը օտարի հարստահարությունից: Սուլթանը անգլո-ֆրանսիական ժանդարմ չի դառնայ և այն պատճառով, որ նա ազգասէր է և գնահատում է թէ իր թագի պատիւը և թէ „մարդարէի փոխանորդի“ կոչումը:

Ռուսաստանի բռնած ընթացքը այստեղ ամենքի համար հաճելի է: Դեռ երէկ մի պաշտօնական զեկուցման մէջ ասված էր. „Ռուսաստանը արհամարհելով ինտրիգների քաղաքականությունը Բ. Դրան դէմ և շարդարացնելով Ֆրանսիայի և Անգլիայի ցանկությունը սիրապետել Թիւրքիայի ամենաւաւ նահանգներից մէկին, առանց միւս պետությունների մասնակցության ոչ մի քայլ չարաւ, որպէս զի պաշտպանէ անգլո-ֆրանսիական պահանջները Եգիպտոսի վերաբերությամբ: Մինչև անգամ երբ առաջարկություն եղաւ Անգլիայի և Ֆրանսիայի դէմ համաձայնություն կայացնել, Ռուսաստանը անյապաղ արձանագրեց իր անունը այն պետությունների ցուցակի մէջ, որոնք ընդդէմ էին արևմտեան պետությունների սիրապետությանը Եգիպտոսին“: Գժուար է ասուգել, թէ որքան ճիշդ է այդ փաստը, ես միայն վկայում եմ, որ այստեղ ամենքը շատ լաւ կարծիքի են Ռուսաստանի մասին:

Ռուսաստանից աւելի լաւ կարծիքի են այստեղ Գերմանիայի մասին: Հաւատացնում են, որ Գերմանիան չէր ընդունի Ֆրանսիայի առաջարկությունը կոնֆերենցիայի մասին, եթէ այդ առաջարկությունը չաներ Ֆրէյսինէի մինիստրությունը, որի անաջողությունը նպաստաւոր կը լիներ Բիսմարկին ատելի Գամբետտայի համար: Բիսմարկ մինչև անգամ այդպիսի անբարեկամություն էլ չէր պատճառի Բ. Դրանը: Բիսմարկ թիւրքերի ճշմարիտ բարեկամ է դարձել: Նա պատկանում է պետական այն մարդկերանց թվին, որոնք ոչ թիւրքաց ազգությունից և ոչ էլ թիւրքերի դաւանած կրոնը արգելք չեն համարում, որ Բ. Դուռը եւրոպական ազգությունների ընտանիքի անդամ լինի: Նա իր օֆիցերների և պաշտօնեաների ձեռքով վերակազմում է թիւրքաց զօրքերը և վարչությունը և հաւատացած է, որ կէս միլիոն սուլիններ ունեցող մի պետություն գերմանական վարչական անձանց և գեներալների կառավարությամբ մեծ ծառայություն կարող է մատուցանել Գերմանիային, եթէ նա պատերազմ կունենայ Ֆրանսիայի կամ Ռուսաստանի հետ: „Եթէ թիւրքերը կը սպառնան Կովկասին կամ Ալժիրին պատերազմական գլխաւոր բեմից, նրանք թշնամիների այնպիսի մեծ քանակություն կը հեռացնեն, որ անկարելի է արհամարհել Գերմանիայի դաշնակցությունը թիւրքիայի հետ“:

Աւստրիայի մասին խօսելն անգամ աւելորդ է: Այստեղ ուրախությամբ միմեանց ցոյց են տալիս թիւրքաց դեսպանի հեռագիրը Վիէննայից, որ հաղորդում է, թէ իբր թէ կայսր Ֆրանց-Յովսէփ ասել է դեսպանին, որ այսուհետև թիւրքիայի պաշտպանությունը նրա արտաքին քաղաքականության հիմքը կը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Հավասի ընկերության» Ալժիրիայից հաղորդում են յուլիսի 10-ից, որ Օրանեան նահանգի հարաւից ստացած տեղեկությունների համեմատ, Ուէդդուսֆանատա հովտում ապստամբների մի խումբ յայտնվեցաւ Սի-Կադուրի առաջնորդությամբ, և արդէն սկսեց յարձակումներ գործել հարևան ցեղերի վրա: Զինուորական իշխանությունը անհրաժեշտ միջոցներ է գործ դնում այդ չարժումները ճնշելու համար:

—«Բէյտերի ընկերության» Ալէքսանդրիայից հեռագրում են յուլիսի 2-ին հետևեալը: Ալէքսանդրիան կատարվապէս քարուքանդ է արած. փողոցները անճանաչելի ավերմունքի տեսք ունեն: Ֆրանսիական հիւպատոսությունը մոխիր է դարձած: Զօրքերի երկու երրորդ մասը փախաւ պաշարման ժամանակ: Մնացած զօրքերի հետ Արաբի-փաշա գնաց Կաֆրդուվար, երկաթուղու առաջին կայարանը: Խեդիվին քիչ էր մնում սպանէին: Արաբին ուղարկեց Ցուլբա-բէյին հեծելազօր և հետակ գնդերով չը ջնջատելու համար պալատը: Բազմաթիւ զինուորներ մտան խեդիվի բնակարանը և ասեցին նրան, որ հրաման են ստացել սպանելու նրան: Երկար բանակցություններից յետոյ աջողվեցաւ գնել 500 զինուորների օգնությունը, որոնք անցկացրին խեդիվին Բասուէլին պալատը, ուր դիմաւորեցին նրան անգլիական զինուորները: Սէյմուր և Կալվին այցելեցին խեդիվին: Մահմուդ-փաշա և բոլոր մինիստրները եկան Բասուէլին պալատը: Հետևակների և նաւատորների մի մի զօրաբաժին մտան քաղաքը և հրացանի ընդեցին մի քանի ասպատակներին, որոնք կալանաւորվել էին յանցանք գործելու ժամանակ:

—Լրագիրներին հեռագրում են Լոնդոնից, յուլիսի 2-ին: Անգլիական համայնքների ժողովում Դիլկ կարդաց Կարարայից ստացած հետևեալ հեռագիրը: «Աշխատում են ցրվել ամբոխը: Արաբի-փաշա մի նաւակով լողաց դէպի Ջրանցքը և այժմ յայտնի չէ նրա ուր լինելը: Կարծում են, որ նրա զօրքը փախել է»: Կարարայա նոյնպէս հաղորդում է, որ չատ ժողովուրդ է սպանված:

—Եւրոպական լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 3-ին: Թիւրքաց մինիստրների խորհուրդը վճռեց կրկին փորձ փորձել, արդեօք չէ կարելի եգիպտական խնդիրը առանց միջամտության վճռել, բայց եթէ պետությունները այդ քանի հետ չեն համաձայնվի, այն ժամանակ Բ. Դուռը պատրաստ կը լինի միջամտության համար:

—Լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 3-ին, որ կոնֆերենցիայի այսօրվայ վճռի համաձայն, դեսպանները կէսօրից յետոյ Բ. Դրանը մի հանդիսաւոր յայտագիր ուղարկեցին, որով հրաւիրում են նրան պատերազմական միջամտություն գործել Եգիպտոսում status quo պահպանելու համար. այդ նպատակով Բ. Դրանը առաջարկում են պետությունների ներկայացուցիչների հետ միասին որոշել միջամտության սահմանափակման պայմանները:

—Բերլինի «Tagblatt» լրագիրը հաղորդում է որ իտալական թագաւորը այս տարի Գաշտէյն կը գայ, գերմանական կայսրի հետ տեսակցելու համար:

—«France» լրագրի տեղեկությունների համեմատ, ֆրանսիական մինիստրների խորհուրդը, յուլիսի 14-ին, պէտք է քննադատության ենթարկէր Անժէրի եպիսկոպոս Ֆրէյսինէի վարմունքը, որը իր թեմի քահանաներին դիմեց նամակով, որի մէջ արգելեց նրանց պատարագ մատուցանել ազգային տոնախմբության առիթով: Նամակը գրված է հանրապետության կառավարության համար վիրաւորիչ խօսքերով:

—Վերջին տեղեկությունների համեմատ, Արաբի-փաշան կտրեց հեռագրական հաղորդակցությունը Հնդկաստանի հետ և պաշարում է Սուէզեան ջրանցքը:

—«France» լրագրի Բերլինի թղթակցի խօսքերով, Բերլինում ամենքը համոզված են, որ Անգլիայի առանձնացած դրությունը Եգիպտոսում իշխան Բիսմարկի գործն է: Կանցլեր յոյս ունի, որ Ալէքսանդրիայի ռմբակոծումը միայն յառաջաբանն է աւելի ծանր անցքերի:

—«Journal des Débats» լրագրին Տրիպոլիսից գրում են հետևեալը: «Եգիպտոսի անցքերը սկսում են այստեղ մեծ տպաւորություն գործել: Դեռ մի քանի օր առաջ կարելի էր յուսալ, որ կամաց-կամաց Տրիպոլիսը կը հանգստանայ. կարելի էր յուսալ, որ այստեղ ապատան գտած առ-

նիսեան ապստամբները շուտով իրանց հպատակութիւնը կը յայտնեն, որ Թիւրքիան կը ստիպվի հրաժարվել մահմեդականներին զրգռելուց և ամեն բան իր սովորական կարգով կը գնայ: Բայց Եգիպտոսից ստացված տեղեկութիւնները հիմնաւորապէս խանգարեցին խաղաղասիրական այդ բոլոր ձգտումները: Ալէքսանդրիան—խօսում են այստեղ արաբները—նշան է տալի կրօնական շարժում սկսելու, որ պէտք է տարածվի Արևելքից մինչև Արևմուտք: Դա վրէժխնդրութեան սկիզբը կը լինի Իսլամի կողմից, որ այդպէս երկար ժամանակ ճնշված էր քրիստոնէութիւնից: Այն արիւնը, որ թափվեցաւ Ալէքսանդրիայի փողոցներում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի առուակ համեմատելով այն հեղեղների հետ, որ պէտք է թանան Ասիան և Աֆրիկան:»

—«Journal des Debats» լրագրին Տրիպոլիսից գրում են հետեւեալը: «Թիւրքերի դերը, սկսվող կրօնական մեծ ապիտացիայի մէջ, որի գլխաւոր հանդիսավայրը շատ կարելի է, մեր աֆրիկական կալուածները կը լինեն, բաւական պարզ է որոշվում: Ի ցոյց, պաշտօնապէս, սուլթանը չէ հաւանում ապստամբութիւնը և աշխատում է խաղաղացնել: Այդ է նրա պարտքը որպէս եւրոպական թագաւորի, բայց որպէս խալիֆ, այսինքն կրօնական առաջնորդ, նա ընդհակառակն, ամեն միջոցներով զրգռում է ապստամբութիւնը:»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այժմ, երբ ամենքը հետաքրքրվում են Եգիպտոսի անցքերով, հարկաւոր ենք համարում հաղորդել ընթերցողին «Востокъ» լրագրից քաղված հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները: Եգիպտոսում մինչև վերջին քաղաքական անցքերը, բնակվում էին 67,653 օտարազգիներ, որոնցից 29,693 յոյն, 14,524 իտալացի, 14,310 ֆրանսիացի, 3795 անգլիացի, 1003 սպանիացի, 752 պարսիկ, 358 ռուս, 139 ամերիկացի, 127 բելգիացի, 119 հոլանդացի, 64 դանիացի, 44 շվեդացի, և 36 պորտուգալիացի: Եգիպտոսի քաղաքներից ամենից շատ օտարազգիներ բնակվում էին Ալէքսանդրիայում:

* * *

Ռուսաստանի ազգաբնակութիւնը: Ռուսաստանի ազգաբնակութեան թվի վերաբերութեամբ «Polit. Corresp.» լրագիրը հետեւեալ նամակ ստացաւ Վարշավայից: «Ամենանոր (ներկայ տարվայ) ստատիստիկական թերը Ռուսաստանի ազգաբնակութեան վերաբերութեամբ շատ հետաքրքիր և մինչև անգամ զարմանալի հետեւանքներ են տալիս: Ներկայ ժամանակում, Ռուսաստանի ազգաբնակութիւնը բաղկացած է 75,604,788 բնակիչներից, Լեհաստանի թագաւորութիւնը—7,219,077, Ֆինլանդիան—(1880 թվի միջոցական ժողովրդագրութեամբ)—2,028,021, Կովկասը, Սիբիրը և միջին ասիական իշխանութիւնները—15,186,456: Ընդհանրապէս, Ռուսաստանը 100,038,348 բնակիչներ ունի: 1870 թվին եւրոպական Ռուսաստանում 65,991,910 բնակիչներ կային, Լեհաստանի թագաւորութեան մէջ—8,078,564, Ֆինլանդիայում 1,732,621 մարդիկ, Կովկասում, Սիբիրում և Միջին Ասիայում—11,767,551, կամ, բոլորը միասին—85,570,646 բնակիչներ: 12 տարվայ ընթացքում բնակիչների թիւը, այդպիսով, աւելացաւ $14^1/_2$ միլիոնով: Պակաս զարմանալի չէ և ազգաբնակութեան աճելը ռուս մեծ քաղաքներում: 1860 թվի հետ համեմատաբար, Ս. Պետերբուրգի բնակիչների թիւը 667,000-ից աճեց մինչև 927,000, Վարշավայի բնակիչների թիւը 271,000-ից աճեց մինչև 401,000, Օդեսայինը—127,000-ից մինչև 198,000 և այլն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յուլիսի: „Новое Время„ լրագիրը հաղորդում է, որ Ցագանրոգի մաքսատան մէջ կատարված գեղծումների համար պատասխանատուութեան են ենթարկված մօտ 30 վաճառականներ: „Новости„ լրագիրը հաղորդում է, որ «օկրուժնոե» վարչութեան և կազէնայա պալատայի միացնելը և նրանցից ֆինանսական մի հիմնարկութեան կազմելը սկզբունքով վճռված է: Պատերազմական մինիստրութիւնը պատրաստում է օֆիցերների համար մի առաջարկութիւն, որ նրանք ապահովեն իրանց կայքը, չը յուսալով օժանդակութիւն ստանալ գանձարանից, եթէ հրդեհ պատահի:

Կ. ՊՕԼԻՍ, 9 յուլիսի: Թիւրքիան համաձայնութիւն յայտնեց մանակցել կոնֆերենցիային, ցանկանալով ապացուցանել, որ կարելի է գործը վերջացնել առանց զինաւորված միջամտութեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յուլիսի: Կ. Պօլսի ռուսաց դեսպան պ. Նօվիկով պետական խորհրդի անդամ է նշանակված:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 10 յուլիսի: Արաբի-փաշա մի շրջաբերականով հրաւիրում է եգիպտական ժողովրդին ստատիկ ընդդիմանալ Անգլիային: Թիւրքիայի զինաւորված միջամտութեան հարցը դեռ ևս վճռված չէ: Եգիպտոսի շատ քաղաքներում եւրոպացիներին ջարդել են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յուլիսի: Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. $75^1/_2$ կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. $75^1/_2$ կ., չորրորդ 90 ր. $37^1/_2$ կ., հինգերորդ 90 ր. 25 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 212 ր. 75 կ., երկրորդ 211 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 37 կ., երկրորդ 89 ր. 50 կ., երրորդ 89 ր. 50 կ., ոսկի 8 ր. 20 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,06 պէնս, Ամստերդամի վրա արժէ 122 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ, Փարիզի վրա արժէ 253 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի: „Правит. Вѣстн. լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութեան հարկային մասնաժողովը ոչնչացրած է: Հրատարակված են նոր կանոններ պարտադիր զինաւորական ծառայութեան արտօնութիւններ ստանալու և զինաւորական ուսումնարաններ մտնելու համար քննութիւնների մասին: Կուկուեվկայի գերեզմանի փորելը կարծում են այսօր կը վերջանայ: Գտնված են 17 դիակներ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵՐԵՒԱՆ. Ս. Տ. Մ. Ուղարկեցէք, այն ժամանակ կասենք ձեզ. կը տպենք, թէ ոչ:

—ԱԽԱԼՔԱԼԱՔ. Մ. Ձեր յօդուածը ստացանք: Կը պատասխանենք ձեզ մասնաւոր նամակով:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.
9—50

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետեւեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

Պատիւ ունիմ յայտնել պատվելի հասարակութեանը որ Սօլօլակից տեղափոխվել եմ Գոլովինսկի պրոսպեկտի վրա Տրիգուլովի տունը և ամիս 4-ից բացել եմ իմ կոնդիտերի և հացեղենի մագազինս „Варшавская пекарня“ անունով, որտեղ ծախում եմ կոնֆեկտներ, պիրոժնի, պէչենի, մուրաբա, սուխարի, կուլիչ տօրտ, բուլկի, զանազան տեսակ հացեղէններ, և տաք պիրոժկէք, շատ ձեռնտու գներով, իսկ դաւառացի վաճառականներին մեծ զիջումով. նմանապէս ընդունում եմ ամենայն տեսակ կոնֆէտեղէնի և հացեղէնի պատուէրներ աւելի արժան քան ուրիշները, այնտեղ ևս կարող են դիմել սօլիտերով հիւանդներ դեղ ընդունելու համար թէ անձամբ և թէ դրաւոր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ

3—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Դրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

Ներսիսեան դպրանոցի բարձր դասատան աշակերտներից մինը կամենում է պարապել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար: Ցանկացողք թող դիմեն Ծովինովի կարվանսարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը № 1.

Վրաստանի և Իմերիթի Հաւոց վիճակային կոնսիստորիացի մէջ նշանակված է Աձուրի 2-ին և կրկնաձուրդ 5-ին առաջիկայ ՕԳՈՍՏՈՍԻ կապալաւ տալոյ համար հետեւեալ էջմիածնապատկան կալուածները: Ա., երեք կրպակ Բազարխանայում: Բ., երեք կրպակ Նորաշէնի եկեղեցւոյ մօտ: Գ., երկու և կէս կրպակ Բուլբչիխանայում: Դ., մի կրպակ փռան թաղում: Ե., մի կրպակ Մէջին փողոցում: Զ., մի երկյարկեայ տուն Մօղնւոյ թաղում: Է., միայարկ տուն փռան թաղում: Ը., միայարկ տուն Կաթոլիկաց եկեղեցւոյ մօտ: Թ., եռայարկ կալուած դաշտի խաչի: Ուստի ցանկացողք կարող են նշանակեալ ժամանակին ներկայ գտանել:

3—3

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Օսկերիչխանումը տրվում է տուն վարձով վերի յարկ № 22. պայմանի մասին հարցնել Կուկիա Միխայլովսկի փողոցում Բէալական վարժարանի հանդէպ. № 56.

2—5

Մեջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Ամենայն տեսակ, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԼԼՆԱՑԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտելիքներ մրամոր նի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըեվոլվերի, սիգար Ռէմինգտոնի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՒՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանդալ գանազան ֆաբրիկների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանակի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանակի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ Վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալոսներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կոճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Մեջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

90—180

Մեջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Іюля 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., д. каз.